



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 03/14.2/3977-14.21 "21" 08 2014 թ.

Եղեգնածորի բնապահպանական տեղեկատվական հասարակական «Օրիոս» կենտրոնի համակարգող պրն Ն. ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բեգլարյան

Ի պատասխան Ձեր 2014 թ. օգոստոսի 11-ի N Ե-08/14 գրության՝ հայտնում ենք, որ Արենի 1 քարանձավի՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնագետների կողմից դեռևս 2007 թ. սկսված հետազոտական աշխատանքներն ընթացքի մեջ են, և այսօր դրանց ավարտի վերաբերյալ որևէ վերջնաժամկետ նշել հնարավոր չէ: Ինստիտուտի տնօրենի ներկայացրած տեղեկույթի (կցվում է) համաձայն՝ հայտնաբերված նյութերի ծավալները մեծ են և հիմնավոր ուսումնասիրության համար կպահանջվեն տասնյակ տարիներ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ քարայրը, որպես զբոսաշրջության օբյեկտ, առայժմ շահագործել հնարավոր չէ: Քարանձավ այցելություններ կարող են կազմակերպվել մասնագիտական խմբերի համար՝ գիտաճանաչողական և կրթական նպատակներով՝ միմիայն արշավախմբի ղեկավարի կամ պատասխանատուի թույլտվությամբ:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝



ՊՄՀՊ գործակալություն
Կատ.՝ Ռ. Հովհաննիսյան
Հեռ.՝ 56.51.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈՍԿ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND
ETHNOGRAPHY SONP



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И
ЭТНОГРАФИИ ГНКО

15 08. 2014 թ.

№ 2470-141

ՀՀ Մշակույթի նախարարի տեղակալ Ա. Սամուելյանին

Հարգելի տիկին Սամուելյան

Եղեգնաձորի բնապահպանական տեղեկատվական հասարակական «Օրիոս» կենտրոնի՝ Արենի-1 քարանձավի հետազոտական աշխատանքների ընթացքի և ավարտման ժամկետների վերաբերյալ հարցմանն ի պատասխան հայտնում եմ Ձեզ հետևյալը.

Արենի -1 քարայրի սիստեմատիկ պեղումները և ուսումնասիրությունը սկսել ենք 2007 թվականից: Աշխատանքները տարվում են 3 հիմնական ուղղություններով՝ 1. Դաշտային հետազոտական աշխատանքներ /պեղումներ/, 2. հայտնաբերված նյութերի վերականգնում և կոնսերվացում, 3. հայտնաբերված նյութերի և նմուշների անալիզներ:

Պեղումները ցույց են տալիս, որ Արենին բազմաշերտ հուշարձան է: Առանձին հատվածներում կատարված դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ քարայրի երկրաբանական նստվածքներն ունեն մոտավորապես 8 մ հզորություն: Առայժմ հնավայրի տարբեր հատվածներում պեղվել են վերին շերտերը՝ 1-2,5 մ խորությամբ: Մինչ օրս կատարված պեղումները դեռևս հնարավորություն չեն տալիս պարզելու թե մշակութային շերտեր ինչ խորություն ունեն: Բացի այդ, քարայրում դեռևս կան սրահներ, անցուղիներ, որ չենք կարողացել մուտք գործել: Նշված հանգամանքները նկատի ունենալով այսօր դեռևս հնարավոր չենք համարում դատողություններ անել Արենի 1-ի մշակութային շերտերի քանակի, հզորության, ծավալների վերաբերյալ և նշել հետազոտության ավարտի որևէ վերջնաժամկետ: Միաժամանակ հայտնաբերված նյութերի ծավալները հուշում են, որ հնավայրի հիմնավոր ուսումնասիրության համար կպահանջվեն տասնյակ տարիներ:

Երևան, 0025, Չարենցի փող. 15, հեռ., ֆաքս (37410) 55.68.96.

Республика Армения, 0025, Ереван, ул. Чаренца 15, тел., факс (37410) 55.68.96
Charents Str. 15, Yerevan, 0025, Republic of Armenia, Tel, Fax (37410) 55.68.96

Քարայրի տարածքն առայժմ միայն ուսումնասիրվում է և այն, որպես զբոսաշրջության օբյեկտ դեռևս հնարավոր չէ շահագործել, այլ կերպ ասած քարայրը փակ է այցելությունների համար: Քարանձավ այցելություն հնարավոր է միայն այն ժամանակ, երբ տեղում արշավախումբն աշխատում է և այցելուն կամ այցելուների խումբը կարող են մուտք գործել քարայր՝ արշավախմբի ղեկավարի կամ պատասխանատուի թույլատվության դեպքում (ինստիտուտի տնօրինությունը հանձնարարել է արշավախմբին, որ հատկապես ընդառաջեն դպրոցականների խմբերին և չանտեսեն նրանց խնդրանքը՝ այցելել պեղավայր): Քարանձավ այցելություն կազմակերպվում է նաև այն դեպքերում, երբ ինստիտուտին են դիմում Հայաստան ժամանած մասնագետներ կամ ՀՀ կառավարությունը, ՀՀ մշակույթի նախարարությունը, Եղեգնաձորի մարզեպատարանը, ԲՈՒՀ-երը՝ իրենց հյուրերին կամ աշխատակիցներին (ուսանողներին) այն ներկայացնելու խնդրանքով: Նշված դեպքերում նույնպես այցելուների մուտքը հնավայր հնարավոր է միայն հուշարձանն ուսումնասիրող մասնագետների ուղեկցությամբ: Հայտնում եմ Ձեզ, որ քարայր այցելության համար գումար չի գանձվում, քանի որ ոչ ինստիտուտը, ոչ էլ պեղող արշավախումբը քարայրը զբոսաշրջության նպատակով շահագործելու իրավունքն ու արտոնությունը չունեն:

Վճարման ենթակա են միայն հնավայրի տարածքում կազմակերպված դասախոսությունները:

Հարգանքներով,
ինստիտուտի տնօրեն՝



Պ. Ավետիսյան